ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆՔ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾՐԱԳԻՐ

«Սոցիալական գործընկերության համայնքային մոդելի արդյունավետության ապահովման ուղիները» «Chatam house» ձևաչափով կլոր սեղան քննարկման

Արդյունքների վերլուծություն

Սույն վերլուծությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «Գլոբալ զարգացումներ» ՀԿ-ի, «Ցկյանս ուսումնառության լիգա» ՀԿ-ի, «Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Սոցիալական գործընկերություն և զարգացում. համայնքահեն հեռանկարներ երիտասարդների համար» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպականմիության տեսակետները:

Մարտի 5-ին Երևանում՝ Անի պլազա հյուրանոցի Նաիրի սրահում, տեղի է ունեցել Սոցիալական գործընկերության համայնքային մոդելի արդյունավետության ապահովման ուղղիների շուրջ կլոր սեղան քննարկումը բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ **«Chatam house» ձևաչափով**:

Կլոր սեղան քաննարկումը կազմակերպվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ICHD) աջակցությամբ «Առանց հղումների իրավունքի» հատուկ մեթոդաբանությամբ, որը լավագույն հարթակ է ստեղծում շահագրգիռ կողմերի համար՝ ներկայացնելու բոլոր մտահոգող հիմնահարցերը, ինչպես նաև անկաշկանդ և կառուցողական երխոսության արդյունքում եզրագծելու համագործակցության խորացման և համայնքաին մոդելի կատարելագործման հնարավոր ուղղությունները:

Կլոր սեղան-քննարկմանը մասնակցել են ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒ վարչության պետ Արտակ Աղբալյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը, համայնքապետարանների աշխատակիցներ, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների Հայկական կրթական ցանցի անդամներ:

Կլոր սեղան-քննարկումը վարել է Կլոր սեղան քննարկումը վարել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տնօրեն Արմեն Գալստյանը: Հարակից ելույթներով հանդես են եկել ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒ վարչության պետ Արտակ Աղբալյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը, ԳՈՒՄ ՀԿ-ի գործադիր տնօրեն Արտաշոս Տոռոզյանը, ով ներկայացրել է ԳՈՒՄ ՀԿ-ի կողմից իրականացվող Սոցիալական գործընկերություն և զարգացում. համայնքահեն հեռանկարներ երիտասարդների համար ծրագրի ընթացիկ արդյունքները:

Այնուհետև ԳՈՒՄ ՀԿ-ի կոնսորցիումի անդամ Գլոբոլ զարգացումներ հիմնադրամի տնօրեն Արամ Ավագյանը շահագրգիռ կողմերին ներկայացրել է ծրագրի շրջանակենրում մշակված Սոցիալական գործընկերության համայնքային մոդելի հայեցակարգը, որի շուրջ և հարց ու պատասխանի քննարկում է ծավալվել:

Գորիսի և Սիսիան համայնքային խորհուրդների ներակայցուցիչներին անդրադարձել են մոդելի ներդրման ընթացքին:

Կլոր-սեղան քննարկման ընթացքում շահագրգիռ ոկղմերը մասնավորապես անդրադարձել են հետևյալ հարցերին.

- Համայնքային մակարդակում սոցիալական գործընկերության կառավարման մարմինների ձևական բնույթն ու այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները
- Խորհրդակցական մարմինների դերն ու կարևորությունը մոդելի ներդրման գործընթացում

- Մոդելի ներդրման իրավական կողմը՝ շահագրգիռ կառույցների միջև համագործակցության հուշագրերի ամրագրմամբ
- Աշխատաշուկայի պարբերական հետազոտության անհրաժեշտությունը
- Շահագրգիռ կողմերի համախմբման մոտիվացիայի խնդիրը
- Համայնքային կենտրոնների ֆինանսական կայունության ապահովումը
- Հայկական կրթական ցանցի զարգացման հնարավորությունները
- Համայնքային կենտրոնները ՄԿՈՒ հաստատությունների, թե ՏԻՄ-երի հենքի վրա ձևավորելու նպատակահարմարության հարցը

Ե՛վ ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒ վարչության պետ Արտակ Աղբալյանը, և՛ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը դրական դիրքորոշում են հայտնել Սոցիալական գործընկերության համայնքային մոդելի վերաբերյալ և հայտնել դրա ներդրման գործընթացում իրենց նախարարությունների համագործակցությունը:

Կլոր-սեղան քննարկումն ամփոփել է Արմեն Գալստյանը: